խանացն Վենետիկու, որ նոյն հրամանաւն կա-
ղող է աստ ի Վենետիկ և յամենայն տեղիս
գործածել զիւր արհեստն Թարց խիք ընդդի-
մութեան։ Եւ այսպէս ստամբայ սնէթներով
և բուբլիքոյ հրամանաւն տարածեցաւ հռչակե-
ցաւ ի Վենետիկ բոլոր քաղաքն բարի համբա-
ւով և լուսարիսսիմոյ դիդօլոյով՝ Թոմազօ Թով-
մաճան մեսիքոյ քիրուրկոյ և օպսթէթրիքոյ
(վիրաբոյժ – մանկաբարձ)։ 1788 Յուլիս 24ին
ուրիշ նուիրական օր մ՚էր Հ. Յ. Թովմաճանի
համար. այդ օրը «ի վանս սրբոյն Ղազարու Ե-
բանելի Մխիթարեան, ի ներկայութեան գերյար-
գելի Ստեփանոս Աբբայի և ամենայն միաբա-
նից, այլ եւս մեր Մարգիզի սի Սերբոս Յով-
հաննէս ազգին և սինեօռ ապաթէ ճիւզէփի
Մարենովիկին՝ մատոյց զառաջին ամենասուրբ
պատարագն ի պատիւ երից անձանց ամենասուրբ
Երրորդութեանն, ծանր փառազուն զգեստուք
և շքաւոր կղերիկոսօք։ Եւ ի նմին աւուր եղեւ
մեծ սեղան ի սեղանատան... ուրախութիւն ի
վանս առ հասարակ մեծի և փոքրու»։

1790ին կը գրէ. «Եւ մինչեւ ցայժմ խեղճ
Տէր Թովմաճան շնորհիւ Տեառն խաղաղացեալ
է ի մեծի խաղաղութեան ի վանս իւր քահա-
նայական սուրբ կարգին մխիթարութեամբն,
վասն որոյ զանչափ գոհութիւնս մատուցանէ
Տեառն մերոյ փրկչին բարերարին, որ է օրհ-
նեալ յաւիտեանս յաւիտենից ամէն»։ Այլուր
կը ծանօթագրէ ինքն իր համար 1803ին 86 ա-
մեայ «և նոյն քահանայութեամբն ապրի մինչեւ
ցայս ամ 1803 Նոյ. 15». կը վախճանի սըր-
բութեամբ 1806ին 90 ամեայ։

Զկրնալով զարգացնել իր նախնական ուսու-
մը բազմազբաղ կեանքին մէջ իր լեզուն կը մնայ
ռամկօրէն և անհարթ, ոճը երկայնաբան՝ բայց
խառնուած իր զուարթ նկարագրով։

Զուարթ տաղերու մը շարքէն զատ՝ որ իր
ծերունի հասակին մէջ յօրինած է վանական
համախմբումներու մէջ ոճական առիթներով,
ունի նաեւ սրբազան – կրօնականներ, համեմա-
տաբար կոկուած լեզուով և ոճով, ուր կ՚երեւի
իր զգայուն սիրտը, խոր հաւատքն ու բարե-
պաշտութիւնը. ատոնցմէ չորս հատ զետեղած է
գիր մանր, երկսիւն, որոնցմէ երկուքը հոս կը
գտնենք՝ Առ Տիրամայրն և առ Մխիթար Աբբա-
հայր երբեւ նմոյշ. նկատելի է հոն Հ. Յ. Թով-
մաճանի խոր հաւատքի և բարեպաշտութեան
հետ իր փարումը Մխիթարայ Ուխտին՝ զոր քա-
նի մ՚անգամ կորսնցնելու ցաւն և ապա վերստին
ստանալու մեծ մխիթարութիւնն ունեցած է։

Հ. Յովհաննէս իր գրական – կենսագրական
յիշատակարաններէն զատ նուէրներ ըրած է իր
սիրած Մխիթ. Ուխտին՝ և հոն կը պահուին
իրմէ. ա. Արծաթեայ ղուացից մը՝ զոր ղրկած է
Հռոմէն 1754ին (էջ 131). բ. «Մեծ սէտէֆկեա-
րի խաչ մի՝ զոր գնեալ էր Յերուսաղէմ Թով-
մաճանն վասն յիշատակի վանաց Աբբային»,
1759ին (էջ 166). գ. Հնդկաստանէն վերադարձին
(1771) պարգեւս ընծայեաց. Հայր Աբբային՝ մի
պատուական կապուտ եագուէթ մատանի (յա-
կինթ). կարգաւորաց՝ զոմանս բանած սելեան
քար (սարդիոն) և զոմանս բանզէհիր (պէլծուռ-
վար). (316)։

Ասոնցմէ զատ վանքիս Թանգարանին մէջ կը
պահուին իրմէ. 1) «մին ծառ մրճամի (բուստ)
ի կարմիր ծովէ». 2). «Երկրորդն մեղջերուի
եղջիւրն». 3) «Երրորդն՝ ռնգեղջիւր»։

* * *

Հ. Յ. Թովմաճանի գործը՝ որմէ այս անգամ
հատուած մը կու տանք այստեղ Եթովպիա կա-
տարած ուղեւորութեան և արքունի գանձապե-
տութեան, ըսինք թէ ոչքան Թանկագին է գա-
րուն և անձերուն շուրջ տեղեկութիւններով։
Աւելցնենք նաեւ իր նպաստը Հայ Առեւտրա-
կան պատմութեան։ Զարմանալի չէր որ Ագոնց
իր Աշխարհագրութեան հատորներուն մէջ օգ-
տէր թէ տեղագրութեան և թէ բարքերու մա-
տուցեր թէ տեղագրութեան և թէ բարքերու մա-
նրամասնութիւններ այդ ակամատեսն վկայէն. ինչ-
պէս կ՚ընէ ատուգիւ «Հապէշ» բաժնին մէջ։

Թովմաճանի գործը կարեւոր էջ մը կը բա-
նայ նաեւ Հայ – Եթովպական հինաւուրց յա-
րաբերութեան պատմութեան։ Աւելչան «Սխաս-
կան»ի «Հայք յԱֆրիկէ»ի «Եթովպիա» բաժնին
մէջ կը յիշէ յայտնապէս Թովմաճանը և կ՚օգ-
տուի անկէ։ Եւ ատուգիւ մենք ալ իրմէ կը
տեղեկանանք թէ երբ 1762ին արքունի գանձա-
պետ կը կարգուի – և իրմէ յետոյ իր Պողոս
որդին –, իրմէ առաջ Արաբկիրցի մ՚էր եղեր
նոյն պաշտօնին վրայ՝ ուստա Սէլէֆ. և թերեւս
անկէ առաջ ալ ուրիշ հայեր։

Հարկ չենք տեսներ մեկնութիւններ տալ ու-
ղեգրութեան. այնքան պարզ է լեզուն և նիւթը
դիւրըմբռնելի։

Հ. ԵՂԻՍ ՓԷՋԻԿԵԱՆ

ԳՈՀՈՒԹԻՒՆ ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐ

Գերապանծ մեծ դշխոյ վեհափառ
Լուսածին նորահրաշ կոյս անճառ
Ոսկէբուն տիրատունկ կենաց ծառ
Ծոցածին սուրբ պտղոյն մեզ պատճառ։
Հոգեղէն ի մարմնի պերճացար
Ընկալուլ անեղին սուրբ տաճար,
Ուղփաճեմ խոյանօք սըլացար
Գերարփի զարեգակն զքեւ արկար։
Իւսեթել փողփողեալ գեղանկար
Գեր ի վեր քան զքերոբ ամբարծար,
Թագուհի զուարթնոց ծայնեցար
Զանձապետ արարչին կարգեցար,
Իմաստուն ողորմած և զբթած
Լիածեռն բազմառատ բարերար.
Իւսելոց որդեզրացս մայր ցուցար,
Մայրենի գրգանօք հոգատար։
Նուաստիս առաւել զբթացար
Թովմանան Յովհաննու ապիկար.
Անդստին ի ծընէ փոյթ տարար
Ի տուն քո որդեպէս ընկալար.
Ռամկական խեռութեանս բազմանոնար
Ներեցեր սերտ սիրով Տիրամայր։
Տարագիր տրոհելոյս զբթացար
Վերըստին դարձուցեր հրաշաբար.
Ի ժանեաց առիւծու անհրնար
Կորզեցեր քո աջովն տիրաբար։
Բախճական հանդիսի խրախարար
Բարձակից զիս կարգել հաճեցար.
Անարժան յետնելոյս մխիթար
Յուսաղիր ապաւէն փրկարար.
Մխիթար ըաբունեալոյ՝ արգոյ մայր,
Հաղորդել զիս նորոգ կամեցար.
Աղերսեմ՝ պահել ցվախճան անվթար
Յերկնաճեմ մենաստանս Սուրբ Ղազար։
Ցորդառատ զանձաբաշխ ինձ գտար
Ողորմած առաւել քան արդար.
Բախացեալ անարժան ես թշուառ
Փառս երգեմ սուրբ Կուսիդ անդադար։

ՆԵՐԲՈՂ ԱՌ ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀԱՅՐ

Նորատունկ նարդոս և շուշան նովտի
Բոլբոջ երկնուղէշ աղիճեան դրախտի
Երջանիկ ծնունդ Սեբաստ քաղաքի
Պսակ պարծանաց հայկազանց ազգի։
Բաբուն Մխիթար՝ մխիթար ազգի,
Աբբայ հայր ծայնեալ արդեամբ լիուլի
Բանաւոր ծաղիկ անթարշամելի
Զրով և բանիւ բուրեալ խնկելի։
Ողորմ վիճակի մերոյին զարմի
Նորոգայարդար դարման կրկնակի,
Ղեկավար ճարտար անձն առաքինի
Վարուց ուղղութեան առաջնորդ արհի։
Անաղօտ փայլմամբ քարոզիչ բանի,
Հիմնադիր կարգի նորոյս Ցակորի.
Ոահանորդ անհետ 'նդ ալիս ամեհի
Լաստակերտ անփուտ ի ծով աշխարհի։
Մեծահրաշ գործոց յօրինիչ արի
Անվեհեր հոգւով քաջ ի հանդիսի.
Խաղաղասէր ոգւոց արկածից չարի
Ախոյեան ամուր, առիւծ կորովի։
Ի վեր քան զբան զովեալ բարելի
Յաւերժ անմոռաց յիշատակ բարի.
Թովմաճան Յովհան անարժան որդի
Բաբունեալոյդ արգոյ աշակերտէի։
Աչկոծ անծամբ տարագիր ելի
Ի քում դպրոցդ առ ժամանակ մի.
Բոտել հանեցար զանարգս եղկելի
Ուրկանել յաման յետ քո վախճանի։
Աղերս մաղթանօք միշնորդեալ Կուսի
Ընկալար կրկին ի քոյդ հովանի,
Բերեալ հասուցեր ի տուն ցանկալի
Ի յարկ որդեգրաց սուրբ մենարանի։
Բորբոք տենչանաց ի սիրտ իմ վառի
Տեսանել զիմ հայր յերկնից քաղաքի.
Աղաչեմ առ Տէր, Հայր իմ յարգելի
Ծգել զիս առ քեզ ի մերս հայրենի։
Հրճուալից զլմօք յողջոյն խնդալի
Ընկալ ի համբոյր սիրոյդ փարելի.
Այս իմ հառաչանք անդադարելի՝
Երբ տեսից զքեզ ընդ Տեառն Յիսուսի։
Ցորժամ գայ փառօք Միածին Որդի
Պարզ երես զտայց ընդ քեզ յատենի.
Բամից Արարչի աւետեաց ծայնի
Լուայց ցնծութեամբ ընդ քեզ, Բաբունի՞։

digitised by A.R.A.R.@

Յաղագս չուելոյ Թովմաճանի ի Կոստանդնուպոլսոյ Պօղոս որդւովն ի յԵգիպտոս և անտի ընդ կարմիր ծով գնալն ի Ճիտտէ և անտի անցանելն ի Աֆրիկէ և գնալն ի Հապէշաստան ի քաղաքն Կէօնտէր։

1761 – Այլ արդ՝ յորժամ ծանեան բարեկամք թէ Թովմաճանն գնալոց է յԵգիպտոս, բազում անձինք բերին զապրանս իւր տասն հազար ղուրուշի և աղաչելով տային թէ այսոքիկ ապրանք վաճառք Եգիպտոսի են. իսկ Թովմաճանն պէրազլայ լինելով այսինքն նազանմիշ ըլլալով էառ և ետ իւրաքանչիւրոցն զընկալման գիրս. և վասն այսորիկ ամենայն ոք բաղձայր տալ նմա զապրանս. վասն զի ի յարեւելս այսպէս ապրանս տուողաց ոչ տան զգիր, զի չէ օրէն։

Արդ գնացեալ Թովմաճանն եգիտ գնաւ մի որ ի Քանտիա կղզին գնալոց էր և անտի ի յԵգիպտոս. և եմուտ Թովմաճան ընդ Պօղոս որդւոյ իւրոյ անդր ընդ իւր ունելով զիւր զապրանսն, և զօտարի զապրանսն ծածկելով ի թաքստի ապահով տեղւոջ։ Եւ մահտեսի Ռաստի որդի Ակոբ աղան որ էր փեսայ քեռն Թովմաճանի, ծանեաւ թէ ի Քանտիա գնալոց է նաւն, ասէ ցԹովմաճանն. Տաց քեզ գիր մի մեր Սոբասալան Ահմէտ Բաշային որ է ի Քանտիա և ունիմ ի վերայ նորա զառնելիս 80 քսակ և զորքանս շահեսցես յիմ դրամոց կէսն քեզ լիցի։ Եւ ետ զգիրն հանդերձ յանձնարարութեամբ։

1762 – Եւ առեալ Թովմաճանին զայն գիրն ել ի Կոստանդնուպոլսոյ 1762 Սեպտ. 28ին և Հոկտ. 25ին հասաւ ի Քանտիայի Սուտան մերձ ի Ցանէա։ Եւ այս Սուտայի նաւահանգիստն տասն մղոնաւ երկայն և խոր է, և ի բերան նաւահանգստին ի վերայ ապառաժ քարի գոյ ամուր բերդ մի, և ի Ցանէա քաղաքն եւս շրջապատն ամուր Ս. Մարկոսի նշանաւ բերդ է որ ի Վենետիկցւոց շինեալ է։ Եւ աստ ի Սուտա և ի Ցանէա նստան աւուրս վեց և ապա ելեալ անտի 20 մղոնիւք հեռի հասին ի Քանտիա։ Եւ Թովմաճանն զառեալ գիրն ի Ցակոբ աղա Ըռաստեանէն տարեալ ետ Սոբասալան Ահմէտ բաշային, և նա սիրով ընկալաւ զնա, և եդ ընդ վաճառապետին իւրոյ գաղատացի Քըլճըօղլու հոճայ Յովհաննէսին. և եւս ետ թայինթայանաղ այսինքն ապրուստ լիովին։ Սակայն վասն առնելեացն Ակոբ աղային այժմ ոչ է ժամանակ գալուստն մեր դրամոց, և յետ երից ամսոց գան և ես յայնժամ առաքեցից առ նա ասելով՝ ոչ ինչ ետ ի դրամոց նորա. և դու, ասէ եթէ ունիս զընտիր ինչ յակնեղինաց բեր տեսցուք ասաց. և Թովմաճանն տարաւ ընդ իւր եղեալ զակնեղէնսն և զմի մատանի տամլա թեղին եագութ կամեցաւ գնել բաշան, և գնեաց 550 ղահեկանաւ և իսկոյն ետ զդրամն։ Դոյր եւս մին բանած մէրջան թրոյ զապգէ որոյ գոյր եւս մին բանած մէրջան թրոյ զապգէ որոյ պալչախն սոմ սրվամա պռանդի էլմասով զարդարեալ էր. եհարց զգինն. իրրեւ լուաւ թէ 6000 ղահեկանի է՝ հրաժարեցաւ ասելով թէ դու երթալու ես, և ես այժմ ոչ ունիմ դրամս. և յոյժ ընտանեցաւ ընդ Թովմաճանին։ Եւ եւս ետ նմա յանձնարարական գիրս առ մեծամեծս Եգիպտոսի. զի երկու տարի յառաջ Եգիպտոսի Բաշայ էր։ Եւ Թովմաճանն շրջեցաւ ի բոլոր քաղաքն և ի ամուր բերդն Քանտիայու, որ և սա ի Վենետիկցւոց շինեալ էր. որ և զամս ութուտասն պատերազմելով օսմանցին հազիւ թէ առեալ է։ Եւ Թովմաճանն կացեալ ի Քանտիա աւուրս 24, ել ի Նոյ. 24ին, և 29 հասաւ ի յԱլեքսանդրիա ընդ որդւոյն իւրոյ Պօղոսի, և գնացեալ իջեւանեցաւ ի վանս Ֆրանջիսկան բաթերայից, որոյ մեծաւորին անունն էր բատրէ Պոնավենթուրա՝ բրէճիտէնթի տի գունվանթոյ տի սանդակատարինա, ուրախ սանֆասոն օրհնեալ մարդ էր։ Եւ գործակալ այսր

վանաց էր բուռկուրաթոռ տրօքման տի Ֆրանչա միւսին Ստէֆանօ Ռուսպոլի, որ յոյժ բարեպաշտ անձ էր և սա. և մեծ բարեկամութիւնս արար Թովմաճանին, զի սորա զրոշն զկնի եօթն աւուրց ելեալ գնաց ի Ռէշիթ Թովմաճանն ի սպիցեօն բաթերայից՝ որոց մեծաւորն էր բատրէ Կայթանօ տի Միլլա բուէճիտէնդի, ընդ որ ի յԵրուսաղէմ բարեկամութիւն մեծ ունէր, որ ընդ նմա գնացեալ էր ի Նազարէթ։ Եւ աւուրս 20 նստաւ մինչեւ անցոյց զապրանս իւր յԵգիպտոս առանց մաքսի։

1763 – Եւ ապա ել ի Ռէշիտէն Թովմաճանն որդւովն 1763 Յունվարի մէկին և 5ին եհաս ի յԵգիպտոս։ Արդ ի յԵգիպտոս ի Տառպիճինին ի տան Յարութիւնի իջեւանեցաւ Թովմաճանն Պօղոս որդւով և մի սպասաւորաւ...։

Այլ արդ՝ իբրեւ ետես Թովմաճանն թէ յետ կալոյ զամիսս 8 ի յԵգիպտոս ոչ յաջողեցաւ առեւտրոյ վաճառն, այլ եւս աւելի էր երկիւղի հրամանն Օսման ասացեալ էր երկիւղի հրամանն Օսման ազային. և եւս աղօթիւք և ողորմութեամբ Տն. բացորոշեաց գնալ ի Ճիտտէ[1], և եթէ անդ եւս ոչ յաջողեսցի գնալ ի Հնդստան։

Եւ ի Ճիտտէ մին անուանի հայոց ազգէ Քանտիացի հոճա Եանաքի իրր կէս յոյն, նմա մին յանձնարարական գիրս առնու Թովմաճանն, և Շալճըօղլու խոճա Աբրահամն կ. Պոլսեցի որ էր ի յԵգիպտոս յայնժամ և կամէր գնալ ի Ճիտտէ, և երբ լուաւ թէ Թովմաճանն եւս գնալոց է, եկն առ նա և ընկերացան և ելին յԵգիպտոսէ կարաւանաւ 1763 Սեպտ. 19ին, և 21ին հասին ի Սուվէիշ[2]. և նստան զաւուրս 23, որ յոյժ վատ և անջուր տեղի ինչ է. և զջուրն գնել պարտի որպէս զշէրպէթ։

Արդ ի Սուվէիշ գնացեալ Թովմաճանն եգիտ զՍիւլէյման շառայպի նաւապետն ընդ որում ի յԵգիպտոսէ բարեկամացեալ էր և խօսեցան զվարձ նաւուն 25 ըռեալ վասն միոյ փոքրիկ զամարայի. և առեալ զնամակ չորից անձանց, այսինքն Թովմաճանի և որդւոյն Պօղոսի, և Շալճի օղլու հոճա Աբրահամի և միոյ սպասաւոր Երեմիայի։ Պատրաստեցան և մտին ի նաւն Հոկտեմբերի 16ին ելին ի Սուվէիշէ 8 նաւք միասին և բնաւքն էին յոյժ բեռնաւորեալք մինչեւ յետ ելելոյ զնեերքին խորշս նաւին և զբոռիտոռն, այլեւս դիզեալ էին եւս յեզերս նաւին մարդաչափ բարձրութեամբ, և յետ երկուց աւուրց հասին ի Թուրիսինայ և ելին արտաքս, որք բերէին ի Թուրիսինա լեառնէ պատուական մրգեղէնս և տանձս զորս գնէին բազումք, զի վասն ոչ գտանելոյ այնոցիկ ի Ճիտտէ մի մի փարա գնէին զհատն տանձին։ Եւ յետ երից աւուրց ելին անտի և մտին յենկէնն, և զմեծ ալեկոծութիւնս կրեցին. և ընկերացեալ 8 նաւքն կորուսին զմիմեանս։ Իսկ նաւն Թովմաճանին հանդերձ միով ընկերաւ հազիւ կարացին ըմբռնել յետ 6 աւուրս զՀասան ատասին։ Իսկ բռնութիւն ալեկոծութեան շուարեալ զնոսա արկեալ էր զերկաթն ի վերայ շապքարի միոյ 15 գրկաչափ խորութեամբ. իսկ այլ կողմանքն խոր անդունդ էր յորս ոչ կարէր ձգել զայլ երկաթս։ Վասն որոյ նաւապետն իւր նաւավարօք և ուխտաւոր մահմետական հաճիովք որք էին 250 հոգիք, առ հասարակ ողբալով զՏէր Աստուած յօգնութիւն խնդրէին, նմանապէս և Թովմաճանն իւրայնովքն։ Վասն զի եթէ նաւն՝ անկանէր ի ցախզէր առասան նաւին մարդաչափ բարձրութեամբ. և հազարաւոր ֆէլլահքն տեղւոյն եկեալ սպասէին խզման առասանի նաւին, որպէս զի յափշտակեսցեն զապրանսն և զմարդիկ նաւին սպանցեն։ Բայց բարեբարն Աստուած ունկնդիր եղեւ աղաչանաց նոցին ի մէջ գիշերոյ յանկարծակի հնչեաց հողմն ի ցամաքէ, որով ֆելլահք վախճանազուրկ եղեն, և նաւավարք սկսան քարշել զերկաթն ուրախութեամբ։

Եւ այժմ զայս զարմանալիս նկատեսցուք, որք այսքան անձինք սկսան քարշել զերկաթն՝ ոչ գայր ի վեր. և իջեալ լուզորդն ետես զի մի թէ երկաթոյն մտեալ է ի մէջ այնր շապ քարին, և առասան սոցին յայս բռնութենէն ոչ խզեցաւ. վասն

1. Հէճազի (Արաբիա) ծովային քաղաք։
2. Եգիպտոսի անապատին ծայրը դէպ ի կարմիր ծով։

digitised by A.R.A.R.@

զի առասան սոցին չէ ըստ հասարակ սովորութեանն ի քթանէ ոլորեալ, այլ ի յոստոց արմատենեաց ոլորեալ է, որ է անխզելի։

Եւ յետ երկուց աւուրց հասին ի Եամ-ղաքն Ռապըք՝ որ մօտ է Ճիտտէի, տաճկի ուխտաւորքն ի էհրամ մտանեն, այսինքն հանեն զպատմուճան իւրեանց, և ի վերայ շապկին արկանեն զանձամբ զեհրամն ի խստութիւն և ի ճգնութիւն, վասն մօտ լինելոյ Մէքքէի։

Արդ ի Սուվէյշէն յետ 23 աւուրց հասին ի Ճիտտէ Նոյ. 8ին։...

Յետ հասանելոյ ի Ճիտտէ գնացեալ եգիտ ոսկերչապետ զղոյումճի Եանաքին որում ունէր զյանձնարարական գիրս, ետ նմա զգիրն և նա ընթերցեալ սիրով ընկալաւ զնա և սկսան խօսիլ զվաճառից քաղաքին, յորմէ յոյժ զանգատեցաւ....

Ուստի բացորոշեաց գնալ ի Հնդիկս և սկսաւ վաճառել Թովմաճանն զմերճանն բարի գնով և բարի մարդկանց։...

Յայսմ վայրի չորս և հինգ եթովպացի հապէշք եկեալ էին և ընդ Պողոս որդւոյն խօսէին արաբերէն, և հապէշքն այնոքիկ եւս տեսին զակնեղէնսն և բարեկամացան ընդ Պողոսին և ելեալ գնացին. և Թովմաճան կամէր եւս վաճառել զայն զարդն ձիոյ, այսինքն զքէսմէն, զոր ի յեգիպտոս բռնութեամբ գնեաց 808 դուրուշով, զի ի հնդիկս ոչ գործ ածեն զայն. և եհան արտաքս առ ի վաճառել։ Եւ ի եկեալ հապէշից մինն էր ծպտեալ, զի էր եղբօրորդի թագաւորի հապէշին. ուստի ի մէջ իւրեանց ասէ այն ծպտեալն ցնոսա. Ես յոյժ հաճեցայ այն վաճառական հային. եկ գնասցուք և յայտնեսցուք զմեզ և հրաւիրեսցուք զնա և զորդին ի քաղաքն մեր, որովհետեւ զայնքան ակնեղէնս ունի, որ մեր թագաւորին յոյժ հաճելի է, և զսակիս բազում տայ նմա։ Յայնժամ մինն ի նոցա նէ որ իւր քահանայն էր, ասէ. Նախ զացուք զորդի նորա զՊողոսն, նմա յայտնեսցուք զքեզ և նմա ծանուցուք թէ հօրն իւրոյ եղեալ ակնեղէնքն յոյժ հաճելի է մեր թագաւորին, և նա ծանուսցէ հօրն իւրում. և արարին այնպէս զի լրտեսեալ տեսին թէ Թովմաճանն չէ ի խուցն, գնացին առ Պողոս որդին, և քահանայն իւր սկսաւ ասել թէ՝ Գիտես որ մեք յոյժ սիրեմք զձեզ և կամիմք ձեզ բարութիւնս ինչ առնել, սակայն եթէ խոստանայք ոչ ումեք ասել. զի հապէշ թագաւորի մարդիկ եմք, և սա թագաւորի եղբօրդորդին է և անուն սորա կոչի Այդու Բիջոյ Ռաֆայէլ, և գնացաք ուխտ ի սուրբ Երուսաղէմ և այժմ դառնամք յերկիրն մեր յԵթովպիա, և վասն երկիւղի մահմետականաց՝ այսպէս ծպտեալ շրջիմք և դու հօր քում պատմեա, թէ ակնեղէնքն զորս ունի հայր քո Թովմաճանն՝ մեք ահա բարեկամաբար ծանուցանեմք քեզ որ յոյժ մեծագին ծախին ի քաղաքն մեր առաջի թագաւորին, ուստի եթէ կամիք ընդ մեզ կարող էք գալ։ Եւ զայս ասացեալ ելեալ գնացին։

Եւ ի յերեկոյին յորժամ եկն հայրն, սկսաւ Պողոսն ուրախութեամբ պատմել հօրն և թէ ակնեղէնքն մեր մեծ համարի և մեծագինք են անդ (որ է սուտ, զի ոչ եւս ճանաչին անդ ակնեղէնք) և թէ է տեղի առատութեան ոսկւոյ։ Զայս լուեալ Թովմաճանին՝ սկսաւ փոքր ինչ միտիլ առ այն, բայց ասէ. Հարցցուք ոմանց։ Եւ ընդ հարցանելն Խօճա Եանաքին և կամ այլոց, բնաւին ամենեւին ոչ հաճեցան, այլ մանաւանդ երկեցուցին պատմելով զնոցին բազմադիմի կոպտութիւնս, այլ եւս թէ մինչ կամիցիք դառնալ յետս՝ ոչ թոյլ տան ասացին, և յետոյ յորժամ եկին այս հապէշքն, ինքն Թովմաճանն խօսեցաւ ընդ նոսա, և յօրմէ զորքան մերժոցաւ ընդ նոսա, և յոլովք զգաղական և գռեհկական ինչ լուեալն պատմեաց նոցա և նոքա միաբերան ասեն ցԹովմաճանն թէ առ նախանձու ասեն, զի գիտեն թէ իրրեւ երթաս ի Հապէշ՝ մեծ ոմն լինելոց ես։ Յայնժամ և խեղճ Թովմաճանն հաւատացեալ բանից նոցին, և բորբոքեալ եհան զբոլոր ապրանս իւր, և զձիու դատիֆէու վրայ բանած քէսմէն. և ասէ Այդու Բիջոն ցԹովմաճանն։ Այս

բանած քէսմէն տուր ընծայ թագաւորին, իսկ միւս ակնեղէնացդ այլ զին ոչ դնեմ, զի մեր թագաւորն ընդ տեսանելն առնու զայսոսիկ և տայ ի զին սոցա բեռ մի ոսկի ուղտու, և Թովմաճանն ասէ. Մի ուղտու բեռն ոսկի աւելի է. ես հաճիմ ընդ մի բեռն իշոյ։

Վերջապէս ընդ խրոս եղեալ Թովմաճանին բացորոշեաց գնալ ընդ այնմ Բիջանին բացորոշեաց գնալ ընդ այնմ Բիջոյի ի յԵթովպիա ի թագաւորանիստ քաղաքս կեօնտէր։

Եւ յետ այնորիկ սկսաւ մեծարել զԱյդու Բիջոն և ասել թէ՝ եթէ ունիս պիտոյս ինչ զրամոց և կամ այլ իրաց, ասա՛ համարձակ։ Եւ նա խնդրեաց զհարիւր դահեկանս. և իսկոյն ետ նմա Թովմաճանն. այլ եւս դաշնադրեցան յայն ինչ աւուր չուել ի միասին, և սկսան տեսանել զպատրաստութիւն ճանապարհի, այլ եւս գնել զընծայս ինչ 50 դուրուշի թէլլի սաիրզու շալ և քանի նրբագործ սէթ-ճատէս. և կալան ի վարձու զնաւակ գնալ ի Մբսովայ (= Մասաւուա Երիթրէի)։

1764 – Արդ ի Ճիտտէ նստաւ Թովմաճանն զաւուրս 64, և ապա 1764 և յունվ. 11ին ել ի Ճիտտէէն Թովմաճանն ընդ Այդու Բիջոյին և համայն ընկերօքն նաւակաւ, և ի գնալն առ ափամբ երջանիկն Արաբիոյ՝ այսինքն Եէմէնու, հանդիպեցաւ նաւակն ի Լոհիա և ի Ճէզան. այսոքիկ երկիրք Սանայու իմամի ներքոյ են. և իշխանն Ճէզանու արգելեալ է զի մի՛ ոք ի քրիստոնէից մտցէ յերկիրն իւր սուրբ համարելով, զի Մէքքէի մօտ է. և խեղճ Թովմաճանն այլ և նաւապետն ոչ գիտեալով զայն հրաման՝ ելին արտաքս, և նաւակն ընդ որ եկին՝ դարձաւ ի նաւն. և անդ ի ծովեզրն շրջելն, եկն մին բարի տաճիկ ոմն և մերձեցեալ առ Թովմաճանն ցաց ձայնիւ ասէ. Դարձի՛ր դարձի՛ր փութաթով ի նաւն քոյ, զի այժմ տեսեալ զքեզ արք իշխանին՝ ըմբռնեն և տան լոպուտս, և զհարիւր դահեկան կամ ըռեալ առնուն տուգանս։ Եւ խեղճ Թովմաճանն թէպէտ իսկոյն կամեցաւ դառնալ, բայց նաւակ ոչ գոյր. և նաւապետն եւս երկուցեալ թէ մի գուցէ եկեալ ի նաւէն եւս հանցեն զԹովմաճանն և տուժեսցին, վասն որոյ և նա ընդ Թովմաճանին կամեցաւ դառնալ ի նաւ, և գտեալ զփոքրիկ նաւակ մի ֆելլահի բեկոտեալ և գարշելի իւղով օծեալ, որ և ոչ ունէր զթի վարելոյ՝ մտին անդր և բեկորօք տախտակաց մինչեւ ի հասանիլ ի նաւն կիսամեռ եղեւ Թովմաճանն ի յերկիւղէն, և հանդերձն ապականեալ ի յերկիւղէն, և հանդերձն ապականեալ ի յորկիւղէն, և չորս զուրուշ եւս ետ վարձս ֆելլահին վասն բերելոյ. և նաւապետն իսկոյն բացեալ զառագաստ նաւին փաթաթեալ զառագաստ նաւին փաթաթեալ խեան. և ապա արքն իշխանին իմացեալ 5–6 զոյգ թիովք պնդեցան զհետ նաւին, բայց ոչ կարացին ժամանել։ Ցեսցուք ասասէն ի սկզբանն այս ճանապարհիս զորքան երկիւղս և անաջողմունք դիպեցաւ և դեռ զորքանս կրելոց է, և զդրամս ծախելոց է, և զորքան ժամանակս անաջողութեամբ կորուսանելոց է և վերջապէս անպտուղ լինելոց է խեղճ Թովմաճանն հաւատալով խարէութեանն և ստութեան Այդու Բիջոյին և ունկնդրելով որդւոյ իւրոյ Պողոսի։

Վերջապէս անցին զկարմիր ծովն և հասին ի Մասվայի կղզին Յունվարի 29ին ուր նստին ի մաքսն յարանցն Ճիտտէի փաշային. և Թովմաճանն ծածկեաց զամենայն ակնեղէնսն իւր ի մաքսէն, և միայն զձիոյ բանած քեսմէն եհան արտաքս. և զմաքսն վասն քեսմէի և այլ հանդերձի ետ ղրշ. 88։ Ի ճերմակ միսաֆիր մարդկանց մաքս առնուն, ուստի ի Թովմաճանէն և յորդւոյ Պողոսին ետուն մաքս ղրշ. 100. ապա անցին ի Մասվա կղզւոյն ի Հարքիքո՝ որ է ի յԱֆրիկա, և անդ առապի Նայիպ Օսման աղա և Ապու Աբին հրամայէ, սոցա եւս ետ զընծայս Պուռսայի զուրթնի և զայլ պոհճալըք, եղեւ ղրշ. 150։ Այլ և սոցա մարդկանցն և Ահմէտ Ատուլային թէ՝ ընծայ և ստակ ետ ղրշ. 82։ Այլ եւս գնեաց զերկուս ջորիս և զերկուս էշս վասն ճանապարհի՝ ղրշ. 130, և վարձն եկեալ նաւին եւս ետ ղրշ. 50։

Արդ ի Մասվա և Հարքիքոյ կացեալ

Պետական գրադարան
ՀՍՍՀ Գրադարան
ՀՍՍՌ-ում ՍՍՀ

digitised by A.R.A.R.@

զաւուրս չորեքտասան և Փետր.ի 12ին ելին ի ճանապարհ ընդ Այդու Բիջոյի և յետ եօթն աւուրց հասին ի Տիքսէ՝ որ է առաջին գիւղաքաղաքն Հապէշլին։ Իսկ Թովմաճանն ոչխար մի իրը մատաղ հոգւոյ հաց արար աղքատաց՝ վասն ազատելոյն ի մահմետական և ի բարբարոսաց երկրէն։ Եւ ի դառնալն եւս ի Հապէշու՝ նոյն Թովմաճանն ի տեղիս յայս ի Տիքսէ 2 ոչխարս արար հոգւոյ հաց աղքատաց, վասն ազատելոյն ի տխմարագունեղ և անբան և անասուն մարդկանէ, որպէս յընթացս պատմութեանս իմասցիս։ Եւ զաւուրս 6 ի Տիքսէ նստան և ապա յետ 9 աւուր հասին ի ԱՏՈՒԱ. Մարտ 5ին, որ է բաշայեանիստ քաղաքն Ճզմաթին, այսինքն Բաշա Միքայէլին։ Եւ այս Ճզմաթի Միքայէլն յոյժ բուռն զօրութեամբ և անողորմ մարդ է, քանզի գործեալ յանցանքն յանցաւորաց առ ո՛ր անդամ մարցանքն յանցաւորաց առ ո՛ր անդամ մարմնոյն վերաբերի, զնոյն հատանէ. զոր օրինակ եթէ աչօք է՝ հանէ զաչսն, եթէ ձեռօք կամ ոտիւք՝ հատանէ զնոսին, ըստ այսմ իմա՛ և զմնացեալսն։

Արդ ի նմին ժամանակի յորում հասին Ատուա Թովմաճանն և Այդու Բիջոն, այս Ճզմաթի Միքայէլն ոչ էր անդ, այլ ի պատերազմ գնացեալ էր 5 աւուրք ճանապարհաւ հետի. վասն որոյ պարտաւորեցան գնալ առ նա՝ և գնացին. և յորժամ ներկայացան առաջի նորա, կոչեաց զԹարգմանն իւր և սկսաւ խօսիլ ընդ Թովմաճանին մի ըստ մէջէ՝ թէ ուստի՞ գաս, և վասն է՞ր եկեալ ես յերկիրս յայսոսիկ, և զինչ է արհեստ քո։ Իսկ Թովմաճանն երկուցեալ վասն ընչիցն ոչ ասաց թէ վաճառական եմ, այլ ասաց թէ բժիշկ եմ, և հանեալ զընծայսն զոսկեհուռ մետաքսեայ սախըզու շալ գօտի մեծ ետ նմա։ Եւ նա մեծաւ շնորհակալութեամբ էառ և սիրով պատուեաց զԹովմաճանն և ասէ. Ես ի վաղիւն դառնալոց եմ ի քաղաքն Ատուա և կինն իմ լուայ թէ հիւանդացեալ է, ուստի բարւոք եղեւ գալդ, զի գնացեալ տեսցուք զնա։ Եւ այսպէս բանիւ իւրով ըմբռնեցաւ Թովմաճանն և ոչ թոյլ ետ նոցա երթալ և դարձան ընդ իշխան Բաշային ի Ատուա վերստին. և տարաւ զԹովմաճանն ի պալատ իւր առ կինն և ետես զի հազայր, և կալաւ զձեռն և հայեցաւ զերակն իրրեւ զբժիշկ, և զմբտաւ էած թէ ի Կ. Պոլիս իւր դուստրն այնպէս հազայր և բժիշկն եկեալ հաւուս իւղով զկուրծն շփելով և օծանելով և զնոր բամպակն խնկեալ ի վերայ հրոյ, ջերմ ջերմ ի վերայ կրծոյն դնելով բժշկեաց, ըստ այսմ կերպի արար և կնոջն բաշայի զաւուրս երիս, մի մի կթզայ եւս տայր ըմպել զչայս նմա, և այսպէս բժշկեցաւ կին։ Եւ ել համբաւ զնմանէ թէ բժիշկ ոմն եկեալ է։ Եւ այրն կնոջ՝ Ճզմաթի Միքայէլն շնորհակալ լինելով ասէ զԹովմաճանն. Աստուած զքեզ յատուկ վասն մեր առաքեաց այսր, զի և ես ահա ծեր եմ, ասա ի միասին ապրեսցուք ընդ քեզ։

Իսկ խեղճ Թովմաճանն գնաց տարաւ կուսեալ և տարտամեալ առ Այդոյ Բիջոյի գժտիլ, և խորհիլ ընդ նմա վասն այսր բռնակալին բանիցն։ Եւ նա քաջալերեաց զԹովմաճանն թէ՝ մի՛ երկնչիր, ես գրեմ առ թագաւորն ի Կեօնտէր ի ծածուկ։ Եւ կալեալ զոմն ի վարձու՝ առաքեցին ի Կեօնտէր առ թագաւորն զգիրն։ Եւ յայնմ միջոցի յամենայն աւուր գնայր Թովմաճանն ի տուն բաշային ընդ Այդու Բիջոյին առ տիկինն։...

Բայց Թովմաճանն գնաց բաշային և ասէ. Ո՞վ Տէր իմ, ես ասա և անդ շրջող բժիշկ չեմ, այլ միայն իմ տանս առնէի բժշկութիւն։ Եւ յայնժամ բաշան եւս արգել զնա, թէ արտաքոյ իմոյ պալատի ոչ ումեք երթիցես ասաց։

Եւ այս Ճզմաթի Միքայէլն յամենայն աւուր առաքէր ռոճիկս Թովմաճանին և Այդոյ Բիջոյին։ Այլեւս ետ Թովմաճանին մին պատուական ջորի. և այսպէս անցին աւուրք 50, դեռ ոչ թոյլ տայր երթալ։

Եւ յետ յիսանից աւուրց եկին երեք անձինք նամական թագաւորին առ Ճզմաթի Միքայէլն թէ՝ Այն նորեկ Թովմաճանն ընդ Այդոյ Բիջոյին թոյլ տացես գալ առ մեզ, զի մեք հրաւիրեալ եմք զնա

միջնորդութեամբն մեր Այդու Բիջոյին։ Այլ եւս ահա զերկուս ջորիս առաքեցաք, զմինն տացես Թովմաճանին, և զմիւսն որդւոյն Պօղոսին և փութով առաքեսցես մեզ. ողջ լեր։

Զայս լուեալ Ճզմաթի Միքայէլին՝ փոքր ինչ տհաճեցաւ ընդ Այդու Բիջոյին, և կոչեալ զնա առ ինքն և ասէ. Ո՞չ ապաքէն ի քէն է այս հնարք գիտեմ, բայց վասն հաճելոյ զկամս թագաւորին թողում։ Եւ ետ զերկուս ջորիսն գառաքեալսն ի թագաւորէն Թովմաճանին։ այլ եւս ետ պաշարս բազումս վասն ճանապարհին. և ելին ի Ատուայէ Ապրիլի 24ին։

Եւ յետ երից աւուրց գնացեալ իջեւանեցան ի գիւղաքաղաքն Սաբայի[1], որ յոյժ աւերեալ և քայքայեալ էր։ Քանզի ի սկզբան շինեալ է քաղաքս այս յանուանի Տիկնոջէն Սաբայէ, որ և կանգնեալ է ի նմա մեծամեծ արձանք տասն տեղիս տեղիս. յոյժ բարձր և գեղեցիկ զրոշմեալ և քանդակեալ, և գոն մինչեւ ցայժմ, բայց ոմանք ի նոյն արձանիցն անկեալք և խորտակեալք էին։

Այլ եւս էր շինեալ տիկինն Սաբայ ըզպալատ մի վասն իւրոյ բնակութեան միապաղաղ քարեայ մեծ լերին միոյ, որ կոփելով և տաշելով կազմեալ է ի նմա զբաւզում սենեակս և զսրահս երիւք յարկօք, և գեղեցիկ սանդխովք, զդրունս և զլուսամուտս, զբակս և զախոռս, և զմաղազաս և զմառանս, զներքնատունս և զվերնատունս և զսեղանատունս, զպաղաջուն քէօշկս և զդստիկոնս, առանց ինչ բռելոյ, այլ բոլոր ի միակտուր քարէ էր կոփաեալ թէ՝ առաստաղն և թէ՝ յատակն. և վասն անբնակ գոլոյն և զուցէ ի պատերազմի՝ մի կողմն այս պալատիս և ի տեղիս տեղիս աւերեալ քայքայեալ է։ Բայց այսու ամենայնիւ քան զկէսն աւելի անվնաս կայր, որ Թովմաճանն անձամբ տեսեալ և շրջագայեալ է ի միապաղաղ քարեայ պալատն այն։

Այլ եւս էր անդ մեծ և հին եկեղեցի մի հապէշի, յորում գոյ ասէին տասնաբանեայ պատուիրանաց մին կոտոր քարն Մովսէսի, և տարեալ զԹովմաճան և զԱյդու Բիջոն յեկեղեցին և ցոյց ետուն զփակեալ խորան մի, յորում էր քարն տասնաբանեայ և ոչ կամէին բանալ։ Բայց պնդելովն Այդու Բիջոյին և եւս թէ ազգական էր թագաւորի, հազիւ կամեցան բանալ։ Եւ բացին և հանին զպատատ ինչ հանդերձի և սկսան օրհնութեամբ բանալ, որ էր պատատ ի մէջ պատատի այսինքն պահնայի, մինչեւ թերեւս հարիւր պատատս բացին, և հուսկ յետոյ պատատեալ ի մէջ մուշամպայի հանին զկոտոր մի քարի, յորոյ վերայ կային զրոշմեալ անքատար գիրս և ծունր եղեալ համբուրեցին և խաչակնքեալ եղին ի տեղի իւր, և վերստին պատատեալ եղին ի խորանի և փակեցին։

Եւ իրաւի մեծ ուխտ լինէր, եթէ այն կոտոր քարն ի քարէ տասնաբանեայ պատուիրանին լցէ, զոր ետ Աստուած Մովսէսի։

Եւ ի միւսում աւուրն ելին ի քաղաքէ տիկնոջն Սաբային և Մայիսի 6ին հասին ի թագաւորանիստ քաղաքն ԿԵՕՆՏԷՐ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս թէ զիարդ ներկայացաւ Թովմաճան առաջի Իրեկի թագուհոյն և թագաւորն Ռոսան նորին, և թէ ետ նոցա զրնծայս իւր մեծագին. և յաղագս գանձապետ լինելոյն և պատս երանելոյն ի պաշտօնեն և բողոքն զորդին իւր զՊօղոսն անդեն և դառնալն ի Ճիտոտ, և ետս բանք ինչ ի վերայ ապարդուրեանց հապէշից։

Այլ արդ ի հասանել Թովմաճանին ի Կեօնտէր, տարան զնա ի պալատն արքունի, և ետուն նմա անդէն չորս հինգ սենի, և ետուն նմա անդէն չորս հինգ սենեկօք տուն մի, նաեւ պատուաւոր անձ մի իբր պահապան նորին, զի թէ պակասութիւն ինչ ունիցի նա՝ հոգասցէ զամենայն։ Այլ եւս եկն հրաման յիթեկէ

1. Axum = Աքսում է, սուրբ քաղաքը։

digitised by A.R.A.R.@

թագուհիէն, թէ մինչեւ ցաւուրս երիս հանգիցէ, զի զվաստակումն ճանապարհին անցուսցէ, և ապա եկեսցէ առաջի իմ։ Եւ ի տուեալ տունն յայն ոչ ինչ զարդ գոյր բաց ի հին օթոցէ միոյ՝ այսինքն խալիէ, որ սփռեալ էր ի յատակ սենեկին։ Եւ յետ երից աւուրց եկն հրաման յԻթեկէէն ընդ Այդու Բիջոյին, թէ արի՛ երթիցուք առ Իթեկէ թագուհին, և զայն ձիոյ մեռաքսահիւս ոսկէհուռ քէսմէն առ ընդ քեզ յընծայել թագուհւոյն (որոյ վասն 1100 զրշ. ծախեցան մինչեւ եհաս ի Կեօնտէր)։

Եւ ելեալ Թովմաճանն գնաց ընդ նմա. և մտին ի հանդիսացեալ տեղին ուր էր բազմեալ թագուհին ընդ թագաւոր թոռան իւրում վարագուրապատ մահճի, այլ եւս ամենայն մեծամեծ իշխանք և ճզմաթիք այսինքն բաշայք։ Ապա կոչեցին զԹարգայսինքն բաշայք։ Ապա կոչեցին զԹարգմանն և Թովմաճանն յետ յարգական ողջունի՝ հանեալ զընծայն իւր զքէսմէն բանալով մատոյց թագուհւոյն ասելով. Բարձրութեան ձերում մեծամեծք ինչք վայել էր տալ. բայց ես աղքատօրէն զայս դուզնաքեայս կարացի բերել և տալ. վասն որոյ զմեր սակաւն շատ համարեսջիք։

Եւ իբրեւ ծանոյց Թարգմանն զբանս Թովմաճանին, յայնժամ ասէ թագուհին «զերիստո» այսինքն շնորհակալ եմ. զոր ամենայն ումեք ոչ ասէ զայս բան թագուհին։ Եւ վասն այն որք անդն կային առընթեր Թովմաճանին՝ սկսան զրդել զնա և զորդին՝ ասելով թէ անկեալ ի վերայ երեսաց երկիր պագէք թագուհւոյն։ Իսկ Թովմաճան զնշան ջերմեռանդութեան ցուցանելով ասաց. Մի՛այն Աստուծոյն իմոյ երկիր պագանեմ։ Եւ իմացեալ զայս թագուհին՝ ասէ. Ցոյժ բարւոք ասաց. թոյլ տուք ըստ սովորութեան իւրոյ արասցէ։ Եւ նա ըստ օրինի Օսմանցւոց խոնարհելով, և ձեռն ի գլուխ տանելով երիցս անգամ արար ողջոյնս թագուհւոյն, և ապա այսու կերպիւ մի անգամ եւս զանդ նատեալ իշխանսն ողջունեաց. և ամենեքեան հաճեցան ընդ այս ողջոյնս։ Եւ ասէ Իթեկէ թագուհին. Գալուստդ ի բարին. և ես զքեզ մեծ ոմն արարիցս Աստուծով. և լուայ թէ բժշկականութիւն եւս արարեալ ես ի Ամուա։ Պատասխանի տուեալ Թովմաճանն ասէ. Վասն երկիւղի ակնեղինացս, զի մի՛ գիտասցէ Ճզմաթի Միքայէլն, սուտ բժիշկ եղէ։ Ասէ թագուհին. Բարւոք խորհեալ ես և զքո ակնեղէնսն եւս ի վաղիւն բե՛ր տեսցուք, և այժմ ե՛լթ ի խաղաղութիւն։ Եւ Թովմաճանն դարձաւ ի տուն իւր ուրախութեամբ վասն այնր բանի Իթեկէին՝ թէ զքեզ մեծ ոմն արարիցս, և թէ բե՛ր զակնեղէնսդ տեսցուք. կարծելով թէ գնելոց է ըստ Այդոյ Բիջոյի բանից՝ բեռ մի ըզտոյ ոսկի տացէ (բայց մի՛ կարծեր)։ Եւ ի միւսում աւուր նոյն վերոգրեալ իշխանքն ժողովեցան ի պալատն առաջի թագուհւոյն և ազդ արարին Թովմաճանին. և նա առեալ զամենայն ակնեղէնսն՝ գնաց ընդ վերակացուի իշխանին իւրոյ և ներկայացաւ առաջի թագուհւոյն և եհան զակնեղէնսն և սփռեաց առաջի նոցա. և թագուհին միայն հայեցաւ ետես և ասէ. Ցոյժ բարւոք են. և թոռն թագաւորն առեալ զկարւոք են. և թոռն թագաւորն առեալ զկարուոք են։ Եւ թոռն թագաւորն առեալ զկարուոք են. և թոռն թագուհին հանեալ մի եազուք մատանին որոյ շրջանակն էր պոլանդի ակամբ զարդարեալ՝ յոյժ հաճեցաւ առ զայն և եդ ի մատն. իսկ միւս իշխանք և բաշայք առեալ զմի մի ակնեղէնս և ընկենլով միմեանց ասեն վասն անդամանդեայ ականց այսինքն էլմասից՝ թէ՝ Այս սպիտակ մարդիկ խորամանկութեամբ, զբոչիկսն՝ այսինքն զապակին բեկոտեալ են և յղկեալ ի պատրել. և սա եւս վասն խաբելոյ զմեզ բերեալ է այսր։ Իսկ վասն ականակուռ մէրճան երախակալին ասէին՝ թէ զոսկրն ոլոքի ոտից կովուն ներկեալ են ի գոյն մէրճանի. առ ի խաբել զմեզ բերեալ է։

Արդ յորժամ ծանեաւ Թովմաճանն ի Թարգմանէն զայսոսիկ անճոռնի գռեհկական և շաղփաղփուն բանսն, ի խոր խոցեցաւ և վախճանազուրկ զոլն գիտաց և ի խաբէութեան որսն անկեալ ի յԱյդոյ Բիջոյէն. վասն որոյ սկսաւ տխուր դիմօք ժողովել զակնեղէնսն և ասել. Ցոյժ բարւոք ասացիք, զի հաւատացեալ ձեր Այդոյ Բիջոյին եկի յայս քաղաքս։

Իմացեալ թագուհւոյն զխոժոռիլն Թովմաճանին ասէ ցիշխանսն յանդիմանելով. Դուք ոչ ճանաչելով զակունսն զայդպիսի գռեհկական բանս խօսելով՝ դուք զձեզ խայտառակեցիք։ Եւ խոստովան լինելով թագուհին ասէ ցԹովմաճանն. Բարձ զակունսդ զայդոսիկ և պահեա՛ առ քեզ զի յիրաւի ի թագաւորութեան մերում ոչ գործածեն զայսպիսի ակունս և վասն այն եւս ոչ ճանաչեն։ Բայց ես զքեզ ոչ վասն եւս ոչ ճանաչեն։ Բայց ես զքեզ ոչ վասն եւս ոչ ճանաչեն։ Բայց ես զքեզ մեծ ոմն առնելոց եմ, այլ այդորիկ իրաց մեծ ոմն առնելոց եմ, այլ պաշտօնիւ. և դու գնա՛ նիստ հանդարտ ի տեղւոջ քում։

Եւ մինչեւ ցայսվայր այն կարմիր եաղութ մատանին դեռ ի մատն թոռան իւրոյ թագաւորին էր. վասն որոյ թագուհին ասէ ցթոռն. Հան զմատանին և տո՛ւր Թովմաճանին։ Իսկ Թովմաճանն կեղծաւորութեամբ ասէր՝ թէ Որովհետեւ եմուտ ի մատն թեամբ ասէր՝ թէ Որովհետեւ թագաւորի՝ չէ արժան մեզ այսուհետեւ ընդունել զայն։ Իսկ թագուհին հանեալ ընդունել զայն։ Իսկ թագուհին հանեալ ետ Թովմաճանին և ասէ. Եկեսցէ ժամանակ զի յայնժամ առից զսա միայն. որնակ զի յայնժամ առից զսա միայն. որպէս յետոյ ի ժամանակի չուելոյ Թովմաճանին՝ էառ զայն վասն թոռանն։

Եւ ելեալ գնաց ի խուց իւր տխուր Թովմաճանն ընդ վերակացուին իւրոյ. և ետ կոչել զԱյդոյ Բիջոն և ասէ ցնա. Ո՛վ եղբայր, ընդէ՞ր խաբէութեամբ բերեր ասելովդ թէ ակնեղէնքն քոյ զբեռն մի ուղտու ոսկի բերէ ի քաքաքն մեր, զոր ամենեւին ոչ ճանաչեն և ոչ գործածեն. այս էր մի՞ արդեօք քո երդմամբ բարեկամութիւնն. տե՛ս որպէս Իթեկէ թագուհին յայտնապէս խոստովանեցաւ թէ յայս քաղաքս զայսպիսի ակնեղէն ոչ գործածեն։ Եւ նա ասէ. Զի թէ ես ոչ ասէի այնպէս՝ դու ոչ գայիր ընդ իս. եւս ես ոչ վասն ակնեղինացդ զքեզ հրաւիրեցի, այլ զի զքեզ բարի մարդ ճանաչեցի, բերի զքեզ որ մեր քաղաքիս բարութեանն վայելեսցես, որպէս և թագուհին մեր եւս սիրեաց զքեզ և մեծ պաշտօն տալով մեծ ոմն առնելոց է զքեզ. և դու զինչս քո պահեա, և առանց ինչ վաճառուց քոց յուսամ թէ իրաւի մեծ ոմն լինելոց ես։ Եւ Թովմաճանն փոքր ինչ զովացեալ և յուսադրեալ ի բանից Իթեկէին և Այդոյ Բիջոյին՝ սկսաւ հարցանել ցնա. Ուրեմն ո՞ւմ այլ ումեք պիտոյ զընծայս տալ. և նա ասէ. Ճզմաթի Շէթէին՝ որ է ազգական և սիրական թագուհւոյն։ Այլեւս զինակիր թագաւորի Այդու Պարամպարիա զինակրին։ Եւ խեղճ Թովմաճանն առաքեաց 150 զրշ. ընծայ Ճզմաթի Շէթէին, և Այդու Պարամպարիա զինակրին առաքեաց 70 զրշի. ընծայ. զայս ամենայն առաքեաց ընդ Այդոյ Բիջոյին։

Եւ յետ երից աւուրց՝ թմբկօք և երգովք և բազմութեամբ սնձանց բերին զընծայ ի թագաւորէն և ի թագուհէն առ Թովմաճանն. և ընդ առաջ հանեն զնա. և նա եւս ուրախութեամբ յառաջ վազէ ընդունիլ զընծայն, պատկերակերպելով ի միտս թէ գոնեա լինելոց է 5–6 հազար զուրուշի ընծայ։

Ո՛վ մեծի դժբախտութեան Թովմաճանի և գռեհկութեանն հապէշ թագաւորին։ Քանզի յորժամ մուծին ի ներքս զմեծ զընծայսն զայնոսիկ՝ այն ինչ էր նորատեսիլ իմն. զի էր մի կով, մի գառն, 10 հաւ, 50 հաց, և մի կուժ՝ այսինքն տէսթի պոզայ և այլ ո՛չ ինչ գոյր։

Ցայնժամ ասէ Թովմաճանն՝ իւր վերակացու եղեալ իշխանին. Ա՞յս է թմբկօք եկեալ ընծայ թագաւորին։ Եւ իշխանն իսկոյն իմացաւ զխոժոռիլն Թովմաճանին, և հեգնական կերպիւ ծաղր առնելն, վասն որոյ ասէ. Այս օրըստօրական ապրուստքո։ Ասէ Թովմաճանն. Ինձ բաւական է մին գառ և 2 հաւ յաւուրն, և զայլս զինչ մին գառ և 2 հաւ յաւուրն, և զայլս զինչ արարից. ես աղքատ մարդ զոլով 1400 զրշի. զընծայս ետու, և յուսայի ի տեղի նորա եռապատիկ և քառապատիկ ընդունել ըստ սովորութեան քաղաքին մերոյ ի թագաւորէն և ոչ երբէք զայսպիսի ինչ կարծէի։ Եւ ի խորս յուսահատութեան անկեալ վարանէր Թովմաճանն։

Իսկ վերակացու իշխանն գնացեալ առ թագուհին պատմեալ է նմա զամենայն։ Եւ նա կոչէ զԱյդոյ Բիջոն և ասէ թէ՝ Երթ և մխիթարեա՛ զքո Թովմաճանն և

digitised by A.R.A.R.@

ասա՛ թէ պատրաստ լինիցի զի ի գալ ամ-
սոյն մեծ պաշտօն ինչ տալոց եմ նմա,
և եթէ մին պակասութիւն ինչ ունիցի՝
ասասցէ քեզ։ Եւ նա ասէ. Գիտեմ զի ի
Մսովա 20 վաքիէ փոխ էառ։ Եւ թա-
գուհին ընդ լսելն զայս՝ իսկոյն հանեալ
ետ զ20 վաքիէ ոսկի՝ որ առնէ 500 ղրշ.
և ասա՛ նմա զի ուրախ լինիցի։ Եւ ելեալ
Այդոյ Բիջոն գնաց առ Թովմաճանն և
ասէ։ Զի՞ է քեզ զի գանգատեալ ես վե-
րակացու իշխանին։ Իսկ նա տրտում և
տխուր դիմօք ասէ. վասն քո աղօթեմ։ Եւ
նա ասէ. Գիտեմ զի այդ աղօթիւքդ անի-
ծաքանես զիս, և թագուհին լուեալ է
զտրտմութիւն քո. կոչեաց զիս և յան-
դիմանեաց թէ ընդէ՞ր ոչ գնաս առ նա և
մխիթարես. և թէ մին պակասութիւն ինչ
ունի՝ ասասցէ քեզ. և ես ասացի թէ
պարտս ունի 20 վաքիէ ի Մսովա, վասն
այն փոքր ինչ տրտում է ասացի։ Եւ
իսկոյն ետ ինձ ահա զ20 վաքիէ. և առ
այժմ առ զայս և ի գալ ամսոյն պաշ-
տօն եւս տալոց եմ ասաց. և կամի զի
դու ուրախ լինիցիս հանապազ։

Յայնժամ փոքր ինչ մխիթարեալ Թով-
մաճանն՝ ասէ ցնա. Սիրելի՛, ես վաճա-
ռական եմ և կամիմ վաճառել զապրանս
և դառնալ ի տուն իմ, քանզի որդւոց և
ընտանեաց տէր եմ, և ասա պաշտօն առ-
նուլ և նստել ասա՛ ինձ ո՛չ վայելէ։ Ասէ
Այդոյ Բիջոն. Ահա այժմ իմացար թէ ասա
ոչ վաճառին ինչքդ, և զայսքան ծախ
արարեր մինչեւ ի գալդ և զայսքան ըն-
ծայս եւս ետուր։ Այժմ եւս զայնքան ծախ
պարտիս առնել ի գնալդ. ուրեմն քանի
մի տարի նի՛ստ ասա ի պաշտօնիդ զոնեա
զարարեալ ծախսդ հանցես։ Եւ երբէք ոչ
ումեք ասասցես թէ կամիս գնալ. զի յի-
բաւի և ես ցաւիմ ի վերայ քոյ որ պատ-
ճառ եղէ գալստեանդ, վասն որոյ խնդրեմ
զի համբերեսցես և ուրախ ցուցցես զքեզ
առ ի հանոյանալոյ թագուհւոյն և իշ-
խանացն։

Եւ ինքն եւս Թովմաճանն խորհեցաւ
ընդ որդւոյ իւրում թէ իրաւ ասէ Այդոյ
Բիջոն թէ յետ այսքան ծախոյ պարապ
և ընդվայր դառնալն զի՞նչ օգտիցեմք.
ո՛չ ինչ. ուրեմն կացցուք ասա՛ և տեսցուք
զի՞նչ պաշտօն տացեն մեզ։ Եւ սկսաւ այ-
նուհետեւ ուրախութեամբ ելեւմուտս առ-
նել ընդ մեծամեծաց և բարեկամութիւնս
առնել, և յամենայն աւուր ռոճիկն գայր
ի թագաւորէն և յոյժ սիրելի եղեւ ամե-
նեցուն և մանաւանդ ընդ Ճզմաթի Շէ-
թէին զի բազում անգամ կոչէր զԹով-
մաճանն ի սեղան իւր՝ որոյ 150 ղուրուշի
ընծայ տուեալ էր և եւս թէ ընդ թա-
գուհւոյն մեծ սիրով և ազգական էր։
Վասն այն և Թովմաճանն յաճախակի
գնայր առ նա։ Եւ յաւուր միում այս
Ճզմաթի Շէթէն այսինքն Բաշայ Շէթիէն
ծիծաղելով ետ զաւետիսն պաշտօնին ի
ծածուկ գանձապետութեան թագաւորի։
Այլ եւս ազդ արար թէ ի գալ շաբաթու
հաշիւ գանձին առնելոց են, զքեզ եւս կո-
չեսցեն անդ, և դու եւս պատրաստ լեր։

Վասն որոյ զայս լուեալ Թովմաճանին՝
կարծելով թէ մեծ ինչ իցէ կամ մեծ վաս-
տակ լինելոց ի գանձապետութենէն, վասն
այն մեծ ուրախութեամբ զարձաւ ի խուց
իւր։ Եւ ի նմին ժամանակի էր գանձա-
պետ ի հայոց ազգէն Առապկերցի ծեր
ոմն բիրտ և տխմար, որ ի վաղուց եկեալ
էր, որոյ անունն էր Սելէֆ ուստայ։ Եւ
յետ աւուրց ոմանց կոչեցին զՍելէֆ ուս-
տան ի յարքունուստ և խնդրեցին ի նմա-
նէ տալ զհամար գանձին. և ժամադիր
եղեն՝ թէ յայն ինչ օր արասցուք։ Եւ
եկն ժամադրեալ օրն և կոչեցին անդ զԹով-
մաճանն և զորդի նորա զՊօղոսն. այլեւս
վեց անձինք զրագիրք համարոյ։ Եւ ա-
ռաջի իւրաքանչիւրոցն սփռեալ կային մի
մի կովու կաշի և բակլայ՝ որով առնելոց
են զհաշիւն. և առաջի Թովմաճանի և
որդւոյն եւս բերեալ սփռեցին զայն կա-
շին բակլայով։ Յանժամ ասէ Թովմաճանն
ծիծաղելով թէ՝ Թողութիւն շնորհէք, մեք
այսու գռեհկական և տաժանելի կերպիւ
հաշիւ ոչ գիտեմք ասելով՝ եհան ի միջոցն
զարծաթեայ կաղամարն և զթուղթն, և
սկսաւ թուագրով այսինքն բախամով ըստ
սովորութեանց իւրեանց գրել ընդ որդւոյն։

Իսկ միւս գրագիրքն ի յեզերիէն, ի ժո-
ղովելն և ի բաժանելն բակլայով՝ յամե-
ցան յոյժ։ Իսկ Թովմաճանն իսկոյն եզե-
րեաց թէ՝ ի ժողովելն և թէ ի գումարելն
և իսկոյն ասաց թէ՝ է՛ այսքան այն, և
այ՛սքան այս եւն. և առ այս զորդ թուա-
գրով առնելոյ Թովմաճանին անդ եղեալ
մեծամեծք յոյժ հաւանեցան, զի ոչ գի-
տէին թուագրով զառնելն։ Ուստի գնա-
ցեալ պատմեցին թագուհւոյն. և նա կո-
չեալ զԹովմաճանն՝ ասէ. Այնց գրագրաց
որք բակլայով արարին զհաշիւն ընդ քեզ՝
նոցա եւս պարտիս ուսուցանել զայն թուա-
գրով հաշիւն քո. իսկ վարձքն ես հատու-
ցից քեզ։ Եւ նա յանձն առեալ գնաց։

Եւ գանձապետութեան հաշիւն տեւեաց
զաւուրս եօթն և յետ ամենայն հաշուիցն
պարտապան եղեւ գանձապետ Սելեֆ ուս-
տան թագաւորին 300 վաքիէ ոսկի՝ որ
առնէ 7500 ղուրուշ։ Վասն որոյ զաւուն
և զերկիրս նորին առին և դեռ 70 վաքիէ
պարտք մնաց թագաւորին, ուստի արկին
ի բանտ շղթայիւք գնա։

Եւ յետ այսորիկ հանդէս մեծ արարեալ
մուծին զԹովմաճանն ի հանդիսին յորում
էր թագուհին Իթեկէ և իւր թագաւոր թոռն
և այլ ամենայն իշխանք և բաշայք և
տարան զԹովմաճանն առաջի թագուհւոյն.
թագուհին ետ զբանալի գանձուն և արար
զնա Գանձապետ 1764 Օգոստոսի 13ին.
և մեծամեծք և պալատականք բազմու-
թեամբ առաջի երթալով թմբկօք և ար-
ուեստականօք թափօրս կազմեցին մինչեւ
ի գանձատունն և զԹովմաճանն շուրջ պա-
տեալ 30 սպասաւորօք՝ տարան ի գանձա-
տունն և յանձնեցին նմա զամենայն ինչ։

Եւ կանոն է գանձապետաց զի այն
30 սպասաւորսն հանապազ պարտի պա-
հել ընդ իւր որքան է ի նոյն պաշտօնն,
զի երբ ելցէ արտաքս գնալ ուրեք ի վի-
զիթայի կամ ի տեսութիւն ումեք՝ ինքն
հեծնու ի ջորին՝ արծաթեայ ձիոյ կազ-
մածովք. և այն 30 սպասաւորքն հրա-
ցանաւ վահանաւ և նիզակաւ ընդ գան-
ձապետին պարտին գնալ։ Իսկ երեքն ի
սպասաւորաց առաջի ջորւոյ գանձապե-
տին թրով գնան։ Եւ այնուհետեւ ամե-
նայն մեծամեծք գան ի շնորհաւորութիւն
Թովմաճանին, նմանապէս և Պատրիարգն
բազմութեամբ քահանայից և այլ ամենայն
եկեղեցականք գան ի շնորհաւորութիւն։

Աւրդ յետ երկուց աւուրց առնելոյ ըզ-
գանձապետութեան պաշտօն՝ եկն տօն վե-
րափոխման ամենօրհնեալ Կուսին Օգոս-
տոսի 15ին։ Եւ թոռն թագուհւոյն՝ թա-
գաւոր մանուկն երեքտասանամեայ որ դեռ
տակաւին հանդիսութեամբ ոչ էր ելեալ
արտաքս գնալ յեկեղեցին, և այսօր ա-
ռաջին օր է հանդիսութեամբ ելանելն թա-
գաւորին, և Թովմաճանին եւս ազդ ա-
ռաքին՝ թէ վասն քոյ նոր պաշտօնիդ թա-
գաւորն ելեալ գնալոց է եկեղեցին հան-
դիսութեամբ. ուրեմն և դու եւս թափորօք
զարդարեա զարսդ և հրճուանս մատո՛ թա-
գաւորին և թագուհւոյն։

Եւ Թովմաճանն եւս վասն նոր գան-
ձապետութեանն որ ինքն եւս պարտի ընդ
թագաւորին լինել, ուստի ժողովեաց ի
յունաց և յայլ ազգաց մահմետականաց
զերկայն հանդերձս արեւելեայց և զգեցոյց
սպասաւորաց իւրոց, տաւուլ զուռնայով,
և փառաւորապէս զարդարեալ ջորւով ա-
ռաջի թագաւորին ինքն ընդ Պօղոս որդ-
ւոյն գնայր պճնեալ և պաճուճեալ՝ որ մեծ
ուրախութիւն եղեւ ի մէջ պալատականաց
և ի մէջ կեանտէրի, թէ՛ վասն առաջին
ելից թագաւորին և թէ վասն այնու հան-
դիսութեամբ ելանելոյ Թովմաճանին ի
պատիւ թագուհւոյն և թագաւորին։

Եւ այն վերոգրեալ վեց գրագիրքն ի
մէջ երից ամսոց ուսան բախամով առնել
զհաշիւն, և այնուհետեւ բարձաւ բակլայի
հաշիւն ի պալատէ թագաւորին. և թա-
գուհին ետ Թովմաճանին իբրեւ վարձ ու-
սուցանելոյ զբախամն՝ 20 վաքիէ ոսկի,
որ առնէ 500 ղրշ.։

Այլ արդ այժմ մի՛ կարծեսցէ ոք թէ
գանձն այս հապէշ թագաւորի իցէ մեծ
ինչ՝ որպէս ի մերս է գանձք թագաւո-
րութեան անհամար ակնեղինաց և ոսկե-
ղինաց և արծաթեղինաց. և որքան կարե-
լի է համառօտիւ պատմեցից։

digitised by A.R.A.R.@

Նախ և առաջ ակնեղէն բնաւ ոչ գոյ ի նոսա, և ի գանձին 6 կուտ ծանրութեամբ ի վերայ կաղամարի միոյ զումրուխտ մի գոյր, էառ զայն Թովմաճանն հրամանաւ նոցին, և ի տեղի նորին եդ մէրճան մի, զի աւելի ախորժելի էր նոցա մէրճանն քան զզումրութն, ըստ այսմ իմա՛ և զայլն։ Այլ եւս վախճանեալ թագաւորաց ոսկեհուռ սուսերս և մեծամեծ հանդերձս իւրաքանչիւրոցն անուամբ կայր պահեալ և այլ հազարաւոր թօփ պէս պէս կտաւեղինայ և այլ հարիւրաւոր թօփ պէս պէս կերմէսուտից և զանազան գունով գեմխայից. և տասն բաստաւ կարմիր և կապոյտ չուխայից. և 15–20 թօփ վենետիկեան ծանր ոսկեթել խեթայի զոր վասն զգեստու թագաւորի և եւս վասն զարդուց ինչ եկեղեցւոյ ի գործ ածեն. և տասն կամ տասնեւհինգ արծաթեայ զարդս ջուրոյ և արծաթեայ սուսերս. և լաւ շէջնէ հրացանս օսմանցւոց հարիւր կամ 150. իսկ հրացանս այսինքն թուֆէնկք ֆրանկաց չեն նոցա հաճելի, և են 2 հազար հին և նոր։ Իսկ ոսկին է բազում, զոր հին և նոր։ Իսկ ոսկին է բազում, ի ներքս ի պալատի պահեալ կայ։ Եւ ի ձեռս գանձապետի 3000 վաքիէ, մինչեւ չորս հազար գտանի. և մի վաքիէ ոսկի՝ արժէ 25 ղրշ. և մին վաքիէի ոսկիին կըշեռքն է 8 տրէմ կ. Պոլսոյ։ Այրդ այսքան 3000 վաքիէ ոսկին ամ ըստ ամէ գայ Թագաւորին՝ ի կողմնակալաց միոյ տէրութեան իւրոյ, և անցանէ ի ձեռս գանձապետին վասն ծախուց տնտեսատան Թագաւորի, և եւս ռոճիկ զօրաց, և վասն գնելոյ զպիտոյս գանձատանն։ Իսկ գանձապետին վարձքն և վաստակն ի ծախելն զայսոսիկ ոսկիսն 100ին տասն է՝ որ առնէ 15 քսակ։ Եւ բաց յայսմանէ գիւղ մի եւս ունի՝ յորմէ շահի հազար ղրշ. և այլ եկամուտ եւս ի Թագաւորէն ունի վասն ռոճկի 50 ղրշ. յամսեանն և այլ աստուստ և անտուստ ունի փոքրիկ ինչ եկամուտս՝ ընդ ամէնն տասն հազար մարչիլ որ է ղրշ.։ Շահի ի տարին գանձապետն՝ որ առնէ 20 քսակ ղրշ.։ Բայց ծախքն եւս բազում են, զի զ30 սպասաւորսն պարտի պահել. և Թէպէտ Թովմաճանն ոչ էր այնքան շռայլ, և փոքր ծախս առնէր վասն իւր, բայց այսու ամենայնիւ ոչ կարաց հանել զծախս տուեալ ընծայից Թագաւորին 1500 ղրշն. որ 18 ամիս գանձապետութիւն արար, զի յորժամ եկ ի Կեօնտէրէն՝ ունէր ընդ իւր 40 վաքիէ միայն՝ որ առնէ հազար ղրշ. և ոմանք ոչ գիտելով՝ ասեն թէ Թովմաճան ի Հապէշ ի գանձապետութեան բազում ինչս շահեցաւ։ Հապա ո՞ւր դիցուք զծախսն գնալոյն և թէ ելանելոյն և մինչեւ ի Ճիտէ զառնալն 1500 ղրշ. ոչ բաւականացաւ. և այլ 26 ամիս եւս ժամանակ ընդվայր անցոյց, և զորդին եւս զՊօղոսն ոչ Թոյլ ետուն գնալ ընդ հօրն։

Այրդ Թողեալ զայս եկեսցուք ի կարգս պատմութեանս։

Այս Թագուհին որ Իթեկէ կոչի՝ էր կին Թագաւորի և ունէր զորդեակ մի ամուսնացեալ։ Մեռաւ իւր այրն և նստաւ որդի իւր փոխանակ հօրն, և այն որդին եւս ստացաւ զաւակ մի և յետ չորից ամաց Թագաւորութեան մեռաւ Թագաւոր որդին. և մայրն՝ այս Իթեկէ Թագուհին՝ նստաւ յաթոռ Թագաւորութեան որդւոյն բուռն զօրութեամբ, զի որդւոյ որդին այսինքն Թոռն փոքր էր՝ ամաց հնգից, և այսու դաշամբ նստաւ յաթոռ որդւոյն, զի այն 5 ամաց Թոռն իբրեւ հասցէ ի 16 ամս՝ զնա նստուսցէ յաթոռ Թագաւորութեան, ապա եթէ ոչ նստուսցէ, կամ Թեանն, ապա եթէ ոչ նստուսցէ, կամ մեռցի, ի լեռնէն իջուսցեն զմինն ի Թագաւորազանցն։ Քանզի գոյ մին բարձր և անառիկ լեառն հեռի ի Կեօնտէրէն ժամս 6 ճանապարհաւ, և ամենայն Թագաւորազունք Հապէշին անդ բնակին և են ամուսնացեալք և ամենայն ուտելի, ընդեղէնք և մսեղէնք գտանին անդ, զի վար և ցան ունին և եկեղեցիք և քահանայք և այլ ամենայն ինչ գտանին անդէն։ Եւ ի մէջ իւրեանց այս Թագաւորազանցն կարգ և կանոն ունին. և եթէ ի քաղաքէն կամիցի ոք գնալ անդր, առանց հրամանի Թագաւորին ոչ կարէ գնալ։ Եւ ի լեառն ելանելոյ ճանապարհ ոչ գոյ, զի ի միոյ տեղնելոյ ճանապարհ ոչ գոյ, զի ի միոյ տեղուղջէ 150 գրկաչափ չուանաւ ի վերուստ

ձգելոց են, և անտի քարշեն ի վեր. նմանապէս և անտի իջուցանեն ի վայր։ Իսկ եթէ Թագաւոր իջուցանելոց են, պահեն զկարգն և որոյ իցէ կարգն՝ զայն եւս այսու կերպիւ իջուցանեն ի վայր։

Իսկ ի ժամանակս Թովմաճանին էր այն Իթեկէ Թագուհին, որ մեծաւ հանճարեղութեամբ կառավարէր, և Թոռն էր յայնժամ ամաց չորեքտասանից, և ի գանձապետութեանն Թովմաճանի որդին իւր Պօղոսն եւս ի պալատն բազում անգամ գնալով գալով՝ ետես չորեքտասանամեայ Թագաւորն զՊօղոսն որ հասակակից իւր էր, սպիտակ և գեղեցիկ՝ երեքտասան ամաց, յարեցաւ ի նա և խօսեցաւ ընդ նմա և սիրեաց՝ յոյժ։ Վասն որոյ գնացեալ խնդրեաց ի մեծ մօրէ իւրմէ Իթեկէն՝ թէ որդի Թովմաճանի Պօղոսն եկեալ երբեմն խաղասցէ ընդ իւր։ Եւ Թագուհին կոչեալ զԹովմաճանն ասէ. Ցերկուս և յերիս աւուրս ի շաբաթու Թոյլ տուր Պօղոսիդ զի եկեալ խաղասցէ ընդ Թոռանս իմոյ։ Իսկ Թովմաճանին յառաջ փոքր ինչ անհաճոյ էր այս խնդիրքն թէ Պօղոս մանուկն իւր աւերի։ Վերջապէս ետ հրաման որդւոյն գնալ և խաղալ ընդ Թագաւորի, որ յետոյ միջնորդութեամբ Պօղոս որդւոյն բազում խնդրուածք հօրն կատարէին, զի Պօղոսն բազում համարձակութիւնս ունեցաւ ի պալատին միջնորդութեամբ Թագաւորին։ Այլ եւս զմեծամեծ իրս աղաչէր Թագաւորին և նա մեծ մօրն խօսէր և իսկոյն կատարէին խնդրուածքն։

Եւ այսու կերպիւ Պօղոսն թէ՛ վասն իւր և թէ վասն հօրն առնէր զբազում բարութիւնս, և մեծ համբաւ ստացաւ Պօղոսն, զի ընդ Թագաւորի համարձակ միւսահիպ էր և խաղայր ընդ նմա և յոյժ սիրելի եղեւ Թագաւորին՝ այնքան մինչեւ վասն իշխանական պաշտօնից ինչ՝ որք պատկանեալ էին Թագաւորի, եկեալ տրօք առնէին զՊօղոսն արտաքոյ պալատին եղաչէին զՊօղոսն արտաքոյ պալատին եղեալ մեծամեծք, և նա խօսէր ընդ Թագաւորին և կատարէր զխնդրուածս նոցա և շահէր յոյժ յոյժ։

Այլ այս եւս յայտ լիցի, զի ամենայն արհեստագործքն քաղաքին են բնաւքն ի ներքոյ հրամանի գանձապետին. իսկ դերձակքն բնաւքն են մահմետականք, և էին ստրուկք. նմանապէս գոն եւս հրեայք. նոքա եւս են ստրուկ ռայէք. և սոցա եթէ յանցանք ինչ հանդիպէր, այս էր սովորական պատիժ նոցին, զի կալեալ բերեն ի պալատ գանձապետի արկանեն ի բանտ և ի շղթայս, և անսուաղ պահեն զաւուրս վեց կամ եօթն մինչեւ ի տասն օր ըստ յանցանաց։ Իսկ գանձապետն Թովմաճան ողորմելով սոցա ոչ պահէր անսուաղ, այլ տայր ուտել. և տայր եւս ֆալախայ ըստ յանցանացն 100–150–200, մինչեւ ցերիս հարիւր, ուսեալ ի Կ. Պոլիս ի մահմետականաց, որք որպէս առնէին հայոց և յունաց, ըստ այնմ կերպի և Թովմաճանն առնէր մահմետականաց. և այնքան երկեան յայս ֆալախայից, մինչեւ կամէին անսուաղ մնալ զաւուրս հնգետասան՝ քան հարկանիլ ջլոք ի յոտսն։ Եւ ի մեծէ ահէ ֆալախային՝ բողոքեցին առ Թագուհին. և յանդիմանեալ ի նմանէ՝ գլխակոր դարձան յետս, զի կանխապէս Թովմաճանն առեալ էր զհրաման ի Թագուհւոյն։

1765 – Այրդ յորժամ հասանեն ի Դեկտ. 25 մեծ ցնծութեամբ կատարեն զսոն Ծնընդեան Տեառն մերոյ. և ի տարեգլխոյն 1765 ի պալատ Թագաւորի մեծ խրախճան լինի ճգմաթեկաց այսինքն բաշայից որք ըստ 14 բաշայութեանց 14 բաշայք ունի, և սոքա ըստ մեծի մասին արտաքս գտանին։ Իսկ եթէ գացի ոք ի նոցանէ ի քաղաքին՝ կոչեն զնա իւրայնովքն, այլ եւս զմեծամեծ իշխանսն կոչեն։ Եւ Թագուհին ընդ Թոռան իւրում նստի ի բարձրաւանդակ տեղի ինչ զարդարեալ, և ի սեղանի իւրաքանչիւր ոք զսպասաւոր մի ընդ իւր պարտի ունել, որք կերակրեսցեն ձեռօք իւրեանց զտեարսն, զի առաջի Թագուհւոյն ամօթ մեծ համարին իւրեանց ձեռօքն ուտել, այլ տէրն բանայ զբերանն և սպասաւորն իւր ձեռօքն զպատառն առեալ դնէ ի բերան տեառն իւրոյ։

Եւ հաց նոցին ոչ է ի ցորենոյ, այլ՝ այլ իմն յունդոյ կակուղ նման զատայի-

digitised by A.R.A.R.@

ֆի լալանկայի, և ընդ մածնոյ խառնեն և առնեն իբրեւ զլոխմայ, և ի դնելն զայն ի բերան տեառն՝ բուլթ մատամբն փոքր ինչ մղէ ի ներքս ի բերանն։

Եւ ի սմին խրախճանի էր նաեւ Թովմաճան ընդ որդւոյն, զորս մերձ ինքեան նստոյց թագուհին. և սոքա ըստ սովորութեան մերոյ իւրեանց ձեռօքն ուտէին զկերակուրն և ցորենի հացով, և որոշեալ էր սեղան սոցին ի նոցանէ։ Իսկ այլքն սպասաւորի ձեռօք ուտելովն՝ փառք համարէին ինքեանց և ծիծաղէին ի վերայ Թովմաճանին։ Եւ Թովմաճանն ընդ որդւոյն հանդարտօրէն ուտէր իւր ձեռամբն. և թագուհին եւս համաձայնեալ ընդ Թովմաճանին՝ սկսան ծիծաղել ի վերայ նոցա։ Եւ յորժամ սեղանն մերձ եղեւ յաւարտել, բերին զհում միս կովու նորոգ մորթեալ՝ իբր մեզէ մրգեղինաց, և սկսան սպասաւորք զխուշպաշի կարատել և դնել ի բերան տեարցն իւրեանց, և հարցանէին Թովմաճանին թէ դու եւս կամիս ուտել զհում միս։ Իսկ նա տհաճելով և խոժոռելով ոչ միայն ոչ եկեր ինքն, այլ եւս որոց մերձ էին նմա ոչ եթող ուտել։ Ժպտեալ Իթեկէն, յոյժ համբեալով։ Եւ ժպտեալ զճեցաւ ընդ այն, զի ինքն եւս ոչ ուտէր զհում միս։ Եւ յորժամ իմացաւ Թովմաճանն զհում միս չուտելն Թագուհւոյն, յայնժամ սկսաւ համարձակ ծաղր առնել զնոսա բազմագիմի կերպիւ և պակասութեամբ, վասն զի և այսր պատճառի այսինքն հում միս ուտելոյ չորս անգամ ի տարւոջ ըմպէին զլուծողական դեղս, ապա թէ ոչ որդունք ի ռնգացն թափէին... Զայս քննեալ և ուսեալ ի Թովմաճանէն բազումք մեծամեծք հրաժարեցան, և այնուհետեւ ոչ ուտէին զհում միսն։ Եւ երբեմն ի յոմանս տունս որք ուտէին՝ ընդ գնալ Թովմաճանին անդր, իսկոյն ամբարձեալ զհում միսն ընդ սեղանովն դնէին, զի մի ծաղր լիցուք Թովմաճանին՝ ասէին։

Եւ ասէն զլիցուք զպատճառն հում միս ուտելոյ նոցա թէ ուստի՛ իցէ յառաջացեալ պատմեսցուք. այլ եւս զկերպն սեղանոյ հացին։

Այս Կեսնտէր քաղաքն հապէշ թագաւորի (նախ քան զ225 տարի, որ է 1540 թուին) ունէին զբազում մահմետական ստրուկս. և ի մէջ քաղաքի խառնեալ ընդ նոսա բնակէին. և այս մահմետականք ի մէջ իւրեանց խորհեալ են թէ՝ Եկայք յարուցուք զխռովութիւն ինչ և տիրապետեսցուք քաղաքիս և զընդդիմողն կոտորեսցուք. և այսու խորհրդով յանկարծակի զբազմիլ և ի փախուստ դարձուցանել զհապշն, և զբազումս խողխողեալ դիաթափ արարեալ կացուցանէին և փախստեայս լինէին ի ծերպս և ի քարանձաւս ի մեծ ահէ և յերկիւղէ մահմետականացն ի գիշերի և ի տուընջեան, զի ոչ կարէին լուցանել զհուր առ ի պէտս կերակրոյ. վասն զի ի տուընջեան ի ծիոյն, և ի գիշերի ի լուսոյ հրոյն երկնչէին. զի ի տեսանելն տաճկաց զծուխս կամ զլոյսն հրոյ՝ յուզի անկեալ գնացեալ սպանանէին։ Ուստի և այս փախստական հապէշք սկսան զմին հում հում ուտել, և ահա յայսմ պատճառէ մնացեալ է հում միս ուտելն հապէշին, որպէս ինքեանք խոստովանեցան։

Արդ իբրեւ հեռացան հապէշքն, ազգ արարեալ միմեանց ժողովեցան ի միում տեղւոջ, խորհեցան բառնալ զմահմետականսն այսու կերպիւ. և ընտրեցին ի մէջ իւրեանց զ20 արս խոհեմս առաքել ի Հռոմ առ Պապն և նորա միջնորդութեամբ առ թագաւորն Բորթուկիզու, և ի նմանէ եղիցի մեզ օգնութիւն ստանալոյ զթագաւորութիւնն մեր, զի նա ի կողմանէ Միւսէմպիկի սահմանակից մեր է այն։ Եւ առ այս խորհուրդ հաճեցան ամենեքեան և եռուն նոցա գանձս բաւականս և առաքեցին զ20 արսն զայնոսիկ ի Հռոմ առ Սրբազան Պապն Գրիգոր ԺԳ. (1549) և եռուն նմա գնամակս աղեռից իւրեանց՝ որ էր այսու օրինակաւ. «Մեք ողդափառ Հապէշի քրիստոնեայքս որ ի յԱֆրիկա, ոռնեաք զբազում մահմետական ստրուկք այսինքն՝ զբազում ի մեզ ի մէջ մեր ի միում գիշերի ռայէք, ոչ ոք ապստամբեալ ապանիսի նիստ քաղաքն մեր զկեսնտեր. և խնդրեմք ի սրբութենեդ զի միջնորդեսցես Բորթիկիզու թագաւորին, զի նա սահմանակից մեր է և կարէ զօգնութիւնս առնել մեզ»։

(Եւ սոքա գնացեալ ի Հռոմ առ Սրբազանն, մատուցին նմա զաղեռից նամակն) և Պապն ցաւակից լեալ զբարւոք յանձնարարութիւնս ինչ գրեաց և ետ նոցա տանել առ թագաւորն Յոհաննէս Գ. Բորթուկիզու, համանգամայն պատմելով զթշնամութիւնս նոցին և եւս թէ ուղղափառութիւնս նոցին և եւս թէ ուղղափառ քրիստոնեայ գոլով նոցա, պարտիմք և մեք օգնել նոցին եւս։

Եւ այն 20 հապէշքն առեալ զգիրն Պապին Գրիգորի ուրախութեամբ ելեալ գնացին ի Բորթուկէզ քաղաքն և ետուն թագաւորին Յոհաննու։ Եւ թագաւորն յորժամ ծանեաւ զթշնամութիւն նոցա, և ինքն թագաւորն եւս յոյժ բարեպաշտ գոլով՝ հրաման արար պատրաստել և զարդարել զհինգ նաւ զօրօք և ամենայն կահ-կարասի պատերազմականօք. և յորժամ պատրաստեցան՝ զրեաց զհրովարտակն թագաւորական առ սպարապետն իւր որ էր ի Միւզէմպիկ քաղաքն իւր ի Աֆրիկա ի կողմն ովկիանոսի հանդէպ Մատակասկառ կղզւոյն և հրամայելով նմա, զի անպատճառ առանց ինչ ընդդիմութեան գնասցէ ի Հապէշու թագաւորանիստ քաղաքն ի Կեսնտէր, և առեալ զայն ի ձեռաց ապըստամբեալ մահմետականաց՝ տացէ հապէշից որպէս էր յառաջն։

ՀԵԹՈՒՄ ԲԻ. ԱՅՑԸ ՂԱԶԱՆ ԽԱՆԻ

Հեթում տէր Կոռիկոսի՝ որ ծանօթ է իբր Հեթում Պատմիչ Թաթարաց անուամբ Հեթում հին պատմիչներուն կարգին, իր Համեր հին պատմիչներուն մէջ 1294 թուականին Պատմութեան մէջ 1294 թուականին զիմաց կը նշանակէ, «ՉԽԳ սպանին զիմաց կը նշանակէ, և նստաւ Պայտուն խան։ Եւ ի սոյն ամի սպանաւ Պայտուն խան։ Եւ ի սոյն ամի սպանաւ Պայտուն, և նստաւ խան Խազան, որդի Արտուն, և նստաւ խան Խազան, որդի Արտունի։ Եւ ի նոյն ամի գնաց թագաւորն հայոց Հեթում առ Պայտուն և գտաւ խան զԽազանն[1]»։

Հեթում Բի Թաթարաց արքունիքը կատարած այս այցելութեան մասին քիչ մը աւելի մանրամասնութիւն կու տայ Ստեփանոս Օրբելեան իր Պատմութեան Բ. հատորին մէջ (էջ 222)։ Այս հատորը, սակայն Օրմանեան իր Ազգապատումին Բ. հատորին մէջ՝ հատուած Թ. 1189 (էջ 1727–8) կը ներկայացնէ Կիւլիկիոյ Հայոց Թաթարաց հետ ունեցած յարաբերութեանց այս շրջանին մասին։ Ան կ'ըսէ։ «Ան (Հեթում Բ) կանուխէն մեկնած էր Կիւլիկիայէ՝ որ Քեղաթուին յաջորդ Պայտունը շնորհաւորէ, սակայն սա արդէն Ղազանի յարձակումովը զբաղած էր, և Հեթում պարտաւորուեցաւ Մարազայի մէջ սպասել Քաղդէացի պատրիարքին մօտ, մինչեւ որ գործը յստակուի։ Իսկ երբ Պայտունն ինկաւ և Ղազան գահին տիրացաւ և բարձրացաւ, փութաց անոր մատուցանել իր մեծարանքը։ Այս առթիւ Ղազան հեգնօրէն դիտել տուաւ՝ թէ նա ո՛չ իրեն, այլ Պայտունի համար ճամբայ ելած էր, որուն Հեթում կը պատասխանէ՝ թէ իրենք Թաթարներու գերագահ իշխանութիւնը կը պատուեն, ով ալ ըլլայ զայն վարողը, ինչ որ Ղազանին շատ հաճելի կու գայ և մեծաշուք պատուով կ'ընդունի Հեթումը։ Սա ալ համարձակութիւն կ'առնէ ծանուցանել արքայի զանցս ազգէն քրիստոնեից,

---

1. Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր ժամագրքին 1319. Նկարագրեց Արտաւազդ Արքեպս. Սիւրմէեան։ – Անթիլիաս, 1933, էջ 101։

digitised by A.R.A.R.@